մէջ, խլեց մի ահագին քարաժայռ եւ, գլխի երկար մազերին պարսատիկի ձեւ տալով, ժայռը դրեց նրա մէջ եւ նետեց ծերունու ետեւից: Ժայռը չդիպաւ եւ, անցնելով ընդարձակ տարածութիւն, ընկաւ Արտամեդի մօտ, մի փոսի մէջ: Իսկ ծերունին վազելով հասաւ մինչեւ Դատոանի ծովեզերքը, ձգեց ծովի մէջ կախարդական հուլունքները եւ երկիրը ազատեց հեշտասէր թագուհու խարդաւանանքից: Արտամեդի երգիչները երգ յօրինեցին եւ այն երգի խօսքերից իր գրքի մէջ ժլատ Խորենացին յիշում է երեք բառ միայն.«ոուլունք Շամիրամայ ի ծովէ:

Ասլանը, ցոյց տալով ինձ յիշեալ քարաժայռը, ասաց.

— Դիմեցէք իւրաքանչիւր արտամեդցուն, նա այդ բոլորը կպատմէ ձեզ: Զոարճալի Արտամեդը ստեղծել է երգիչներ, բանաստեղծներ, ինչպէս զոարճալի Գողթնիքը: Բայց ո՞ւր են նրանց վաստակները: Ժողովրդի բերանում մնացել է միայն հին աւանդութիւնը: Աւելի քան չորս հազար տարոայ աւանդութիւնը դեռ պահպանել է նա: Մի այդպիսի աւանդապահ ժողովուրդ երբեք չի մեռնի, եւ ա՛յդ է, որ նրան պահպանել է ժամանակների ամենածանր հարոածներից: Ով որ իր անցեալը չէ մոռանում, ներկայի մասին նա կարող է հոգալ: Նայեցէք մեր շուրջը, ամէն մի ժայռ, ամէն մի աւերակ, ամէն մի բլուր, ամէն մի աղբիւր եւ առոակ ձեզ մի բան կպատմէ ամենահին անցեալից: Եւ այդ պատմութիւնների մէջ դուք կը տեսնէք երկրի ու ժողովրդի անցեալ մեծութիւնը...

Հայրենի երկրի յիշատակները տեսնելիս, հայրենի երկրի աւանդութիւնների վրայ խօսելիս, Ասլանին տիրում էր մի առանձին ոգեւորութիւն, եւ նրա զգայուն սիրտը լցւում էր անսահման հոգեզմայլութեամբ: Հնութիւնները եւ շրջակայ տեսարանները նրան բոլորովին մոռանալ տոին, որ քարաւանը անցել էր, եւ մենք բաւական ետ էինք մնացել: Երբ յիշեցրի այդ, նա պատասխանեց.

— Կը գնանք, կը հասնենք, բայց քեզ հարկաւոր է այդ բոլորը իմանալ:

Հայոց եկեղեցիների, մատուռների եւ զանազան սրբավայրերի աւերակներով լի է Արտամեդը: Նրանց խաչերով զարդարած քարերը, սրբապիղծ մահմեդականների տների շինուածքներին երկար տարիներ ծառայելուց յետոյ, տակաւին մեծ մասը տխուր, սրտատոչոր կոյտերով, մնում են իրանց տեղում: Բայց ինձ այնքան չէին գրաւում այդ քրիստոնէական ժամանակների աւերակները. նրանցից շատ էի տեսած: Ինձ գրաւում էին այն վիմափոր սենեակները, մեծ-մեծ այրերը, որ գտնւում էին ժայռերի մէջ: Նրանք իմ վրայ մի անբացատրելի, խորհրդաւոր ազդեցութիւն էին գործում: Ինձ գրաւում էին երկու ահագին ժայռեր, որոնց ճակատը պատած էր բեւեռա-